**Արձանագրություն N 2-6**

**<<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6>> ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

15.09.2021թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան

Աշ. Գրիգորյան

Գ. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլյան

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ռ. Եղիազարյան

**1. Գնման ընթացակարգի շրջանակներում գների նվազեցման նպատակով հրավիրված բանակցությունների արդյունքների մասին**

---

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ բանակցությունների համար սահմանված ժամին բանակցություններին չեն ներկայացել <<Գրիգորյան Շին>> և <<Բիդեք>> ՍՊ ընկերությունների ներկայացուցիչները, որոնց գնային առաջարկները մնացել են անփոփոխ, ներկա գտնվող <<Ինտերեվրոս-Արգոս>> ՍՊ ընկերությունը գնային առաջարկը թողել է անփոփոխ, իսկ <<ԱՐՍԵՎ>> ՍՊ ընկերությունն առաջարկել է հետևյալ վերջնական գինը՝

*ՀՀ դրամ*

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը | ԱԱՀ | Ընդհանուր գին |
|---|---|---|---|---|
| 1 | <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ | 1 452 000 000 | 290 400 000 | 1 742 400 000 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ – ,4 դեմ - 0:*

**2. Գնման ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին**

---

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ | բավարար | 1 742 400 000 |
| 2 | <<Գրիգորյան Շին>> ՍՊԸ | անբավարար | 1 845 501 600 |
| 3 | <<Ինտերեվրոս Արգոս>> ՍՊԸ | անբավարար | 2 125 849 980 |
| 4 | <<Բիդեք>> ՍՊԸ | անբավարար | 2 200 094 573 |

Հաշվի առնելով, որ <<Գրիգորյան Շին>>, <<Ինտերեվրոս Արգոս>> և <<Բիդեք>> ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են նախահաշվային գինը և հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է <<Գրիգորյան Շին>>, <<Ինտերեվրոս Արգոս>> և <<Բիդեք>> ՍՊ ընկերությունների հայտերը գնահատել անբավարար և մերժել:

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:*

### 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:*

### 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի Նախագահ՝ ____________________ Ա. Միրզոյան

Անդամներ՝ ____________________ Դ. Շատվերյան

____________________ Աշ. Գրիգորյան

____________________ Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ____________________ Ն. Նիկոլայան